# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<<19>> <<հունիսի>> 2017 թ  N 72

ք. Եղեգնաձոր

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ԱՐՄԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով 2014 թվականի մայիսի 23-ի N260 աշխատանքային պայմանագրի 5-րդ կետի 5.1 ենթակետը, Եղեգնաձորի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից տրված ԱԲ N 179445 Արմինե Ստեփանյանի մահվան վկայականը.

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ   ԵՄ**

1. 2017 թվականի հունիսի 19-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Ստեփանյանի հետ կնքած 2014 թվականի մայիսի 23-ի N260 աշխատանքային պայմանագիրը :
2. Տնօրենի պարտականությունների կատարումն ժամանակավորապես դնել «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բժիշկ-ստոմատոլոգ Սամվել Շահբազյանի վրա:
3. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու առողջապահության և սոցիալական ապահովության վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:
4. Ս.Շահբազյանի վարձատրությունը կատարել օրենքով սահմանված կարգով:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ